



Հակոբ Պարոնյան

Երկու տերով ծառա մը

Արարված երկրորդ

ՏԵՄԻԼ Ա

ԿՈՄԻԿ, ԲԻՐԱԲ

ԿՈՄԻԿ(կը քաշկոտէ գԲհրաբ) Եկո՛ւր, եկո՛ւր:

ԲԻՐԱԲՀանգիստ թո՛ղ գիս:

ԿՈՄԻԿԲայց եկո՛ւր նստինք, որ կերածնիս մարսեցնենք:

ԲԻՐԱԲՁգէ՛ որ նստիմ:

ԿՈՄԻԿ(աթոռի վրայ կը նստեցնէ մայրը) Մայրիկ, կենացս մէջ ասանկ ուրախ գիշեր մը անցուցած չէի:

ԲԻՐԱԲԴէմքերնուդ վրայ կը փայլի ունեցած ուրախութիւննիդ, բայց, թէ որ տերդ գայ ու քեզի այսպէս գուարթ տեսնէ, ի՞նչ կ'ըսէ:

ԿՈՄԻԿՈ՞ր տէրս:

ԲԻՐԱԲՔանի՞ տէր ունիս:

ԿՈՄԻԿԵրկու, երկու:

ԲԻՐԱԲՏարօրինակ բան մ'ալ այս է:

ԿՈՄԻԿԿը սխալիք, մայրիկ. ես մարդ տեսեր եմ, որ տասը ծառայ ունի, ես որ երկու տէր ունիմ, տարօրինակ բան է, չէ, չէ...:

ԲԻՐԱԲԵթէ իմանան քու տերերդ, որ երկու գատ-գատ մարդիկներու կը ծառայես, ի՞նչ կ'ըսեն:

ԿՈՄԻԿԵս յիրաի երկու տէր ունիմ, բայց թէ որ երկուքը մեկըզմեկու հետ խառնեն, հազի թէ ամբողջ տէր մը կրնամ կազմել:

ԲԻՐԱԲՇատո՞նց ի վեր է, որ երկու տէր ունիս:

ԿՈՄԻԿԱյո, մեկը շատ հին է, պապէս մնացած, իսկ միւսը՝ նոր, եւ Մարգրիտի հայրն է:

ԲԻՐԱԲԽելքս չհասնիր, բայց...

ԿՈՄԻԿՄի վախնար, մայրիկ. անանկ մեկ վարպետութեամբ մը կը ծառայեմ, որ՝ ոչ մեկը եւ ոչ միւսը կրնան մարդս, խմենք. եթէ հարուստ մեկն ըլլայի, գուարթ ըլլելու համար ամէն օր առուրնէ մինչեւ իրիկուն գինի կը խմէի: Այս Պորտոյի գինին մարդս կը քաջալերէ՝ գիտէ՞ք: Չեմ գիտեր, բայց գինի չխմած ինքզինքս հիմակուան պէս քաջասիրտ չէի գտնար. (Թեոփիլէ կը մտնէ) ի՞նչ ցնծութիւն. (Ուժգնակի) ի՞նչ ուրախութիւն. եթէ այս միջոցին օրհորդ Մարգրիտը դեմս ելլէ, իսկոյն վիզը կը պլլուիմ, համբոյրներ կ'առնում իր վարդակարմիր այտերէն (Տերը կը տեսնէ) եւ... եւ... եւ... (Կ'ելլայ) եւ...

ԲԻՐԱԲԻնչո՞ւ չես շարունակեր:

ԿՈՄԻԿՔաջալերութիւնս կորուսի:

ԲԻՐԱԲԻ՞նչ է:

ԿՈՄԻԿԼո՞ւ է:

ԲԻՐԱԲԸսէ՛, ըսէ՛:

ԿՈՄԻԿՏէ՛րս է, տէ՛րս է:

ՏԵՍԻԼ Բ

ԹԷՆՎԻԻԷ եւ նոյնք

ԹԷՆՎԻԷԱյս ո՞րքան ուրախ կը տեսնեն զքեզ, Կոմի՛կ:

ԿՈՄԻԿՏէ... տէ... տէ...ր:

ԲԻՐԱԲԱնանկ խոժոռադէմ մէկն է, որ գաւակս վախցուց, եւ լեզուն կորոյս:

ԹԷՆՎԻԷ (բարկութեամբ) Ի՞նչ կայ, ինչո՞ւ պապանձեր ես:

ԿՈՄԻԿՏէ... տէր.... պա... պա... պատիւ ունիմ ձեզի ներկայացնելու իմ մէկ
հա... հա... հատիկ մա... մա... մայրս:

ԹԷՆՎԻԷՏիկիմ, ձեր գաւա՞կն է այս:

ԲԻՐԱԲԱյո՛, պարո՛ն:

ԹԵՈՓԻԼԵԲայց քեզի չնանհր:

ԲԻՐԱԲՈՂ. իրեն կը նանհի:

ԹԵՈՓԻԼԵԻնչո՞ւ չես պատասխաներ:

ԲԻՐԱԲՎասնզի կարողութիւն չունի:

ԿՈՄԻԿՏԷր, պատասխանելու բան մը չկայ:

ԹԵՈՓԻԼԵՔեզի կը հարցնեն, թէ ինչո՞ւ այնչափ այլայլած ես, պատճառը ըսէ՛:

ԿՈՄԻԿՊատճառը այն է, որ ուրիշ անգամներ երբ զիս կանչելու ըլլայիք, իսկոյն կը, պատրաստուէի ձեզի պատասխանելու. բայց այս անգամ յանպատրաստից դիմացս ելաք, եւ ըսելիքս մոռցայ:

ԹԵՈՓԻԼԵԱյսքան վախկո՞տ ես:

ԿՈՄԻԿՁեր կերպարանքը չգիտեն թէ ինչո՞ւ համար այսչափ վախ տուաւ ինձի:

ԲԻՐԱԲ(մեկուսի) Թէ որ արջ մը ըլլար, գաւակս այսքան չէր վախնար:

ԹԵՈՓԻԼԵՉեն ուզեր, որ դիմացս ելած ժամանակդ ասանկ տեսնամ քեզի, կ'ուզեն որ համարձակ ըլլաս եւ ամէն հարցումներու շուտով պատասխանես, ապա թէ ոչ կը վոնտեն գրեզ:

ԿՈՄԻԿՉէ... չէ, տէ՛ր միշտ համարձակութեամբ պիտի պատասխանեն:

ԹԵՈՓԻԼԵԵրուանդը տեսա՞ր:

ԿՈՄԻԿԱՅՈՒՆ՝ տէր:

ԹԵՆՓԻԼԵՆՈՒՐ:

ԿՈՄԻԿԻ գոգն Մարգրիտի:

ԹԵՆՓԻԼԵԽԵՆՈՒՐ տղայ. բոլոր իր ստացուածքը վտանգի մէջ կը դնէ Մարգրիտի համար. շա՛տ կը սիրէ Մարգրիտը:

ԿՈՄԻԿԻ՞նչ կ'ըսէք, տէր, Մարգրիտի վրայ ունեցած սէրը այնպիսի սաստկութեամբ բորբոքած է իր սրտին մէջ, զոր մարելը անհնար է:

ԲԻՐԱԲԱՅՈՒՆ՝, գաւակս իրաւունք ունի. վասնզի մենք խմելու անգամ ջուր չենք կրնար գտնել:

ԿՈՄԻԿԻՆ՝ ի՞նչ կը ծախես:

ԹԵՆՓԻԼԵՆՈՒՐ ալ գիտեմ ասանկ ըլլալը, բայց ի՞նչ ընելու եմ զինքը սիրոյ ճիրանէն ազատելու համար. վասնզի կը սիրեմ զինքը, եղբօրորդիս է. մինչդեռ վրայ հոգ տանիմ. բայց ի՞նչ ընելու եմ այսպիսի պարագայի մը մէջ: Ի՞նչ խելք կը տաս ինձի, Կոմի՛կ:

ԲԻՐԱԲ(մեկուսի) Չաւակս խելք տալու ալ սկսեր է: Աստուած հետն ըլլայ:

ԿՈՄԻԿԻ՞նչ խելք կրնամ տալ, մինչեւ որ Երուանդի սրտին մէջ ունեցած սէրը իմ սրտիս մէջ չփոխադրենք, անկարելի բան է, որ կարենանք Երուանդը ազատել:

ԹԵՆՓԻԼԵՆՈՒՐ՞նչ ըսել կ'ուզես:

ԿՈՄԻԿՁԵԳԻ հաւատարիմ ըլլալս յայտնելու համար, ի՞նչ ընեմ, ես պիտի ստիպուիմ Մարգրիտն սիրել, որպէսզի Երուանդը ազատի: Եւ այս բանիս համար ժամ առաջ ձեռնամուխ ըլլալու եմք, վասնզի Երուանդը քանի մը շաբաթէն կրնայ գերեզման իջնալ:

ԹԵՈՓԻԼԷԻ՞նչ կ'ըսես:

ԿՈՄԻԿԱյ՝, տէր. ես շատ ջանացի Երուանդը համոզելու, իսկ նա Մարգրիտը յիշելուն պէս խելքը կը կորսնցնէ եւ...

ԹԵՈՓԻԼԷՈՐԵՆ՝ կարելի եղածին չափ կ'աշխատիմ ես զինքը Մարգրիտի գրկէն յափշտակելու: (Բարկութեամբ) Երթամ զինքը առնեն ու տանս մէջ բանտարկեմ, Մարգրիտն ալ խայտառակ ընեն... բայց... անգթութիւն մըն է... որքան անագորոյն մէկը ըլլալու է, որ կարենայ երկու փափկասնունդ էակներու ասանկ գազանաբար վարուիլ: Չէ'... չէ, երթամ պարոն Անտոնի նամակ մը գրեմ եւ հասկցնեմ իրեն ամէն բան. անիկա ալ իր կողմէն պէտք եղած տնօրէնութիւնները կատարէ, եւ ասանկով կրնանք Երուանդը ազատել. մնաք բարով, տիկին. դու ալ հոս սպասէ, որ նամակը առնես տանիս: (Կ'երթայ):

ՏԵՄԻԼ Գ

Անտոն, Բիբաբ, Կոմիկ

ԱՆՏՈՆ(փատի մը կրթնելով կամաց կամաց կը գայ)

ԿՈՄԻԿԱյ միսն ալ:

ԲԻԲԱԲԱՅ՝ս է միս տերդ:

ԿՈՄԻԿԱյ՝:

ԲԻՐԱԲԵրկուքն ալ մէկգմէկէ ցած:

ԿՈՄԻԿՉԷ, ասիկա միսէն բարձր է:

ԲԻՐԱԲԵս երթամ, ինչո՞ւ իս սպասեցնել կը տաս, կը վախնամ աս մարդէն:

ԿՈՄԻԿԿայնէ, ասոր ալ ներկայացնեմ գքեզ:

ԱՆՏՈՆՄիշտ անհանգիստ, միշտ հիւանդ. ի՞նչ պիտի ըլլի վիճակս: Հո՞ւ ես, Կոմիկ:

ԿՈՄԻԿԱյո, տէր:

ԱՆՏՈՆ(կը նստի) Անկողինէն հիմա՛ ելայ. շատ տկար եմ. չգիտեմ թէ պատճառը ինչ է: Լուր մը ունի՞ս:

ԿՈՄԻԿՈչ լուր ունիմ եւ ոչ մուր. միայն մայր մը ունիմ, որ պատիւ յանձին կը համարիմ գայն ներկայացնելու ձեր մեծութեանը:

ԲԻՐԱԲԲարի լոյս, պարոն:

ԱՆՏՈՆԱստուծոյ բարին, տիկին. ինչպէ՞ս էք:

ԲԻՐԱԲ(առ Կոմիկ) Ի՞նչ ըսեմ:

ԿՈՄԻԿ(բարկութեամբ) Աղէկ եմ, չըսե՞ս:

ԲԻՐԱԲԱղէկ եմ:

ԿՈՄԻԿՕ՛չ, այսչափ տարիներէ ի՛ վեր միայն բարի լոյս մը սորվեր ես. ես ալ ամէն տեղ քեզ կը գովեմ, ըսելով թէ իմ մայրս ուսումնական է, ճարտասան է, եւ դուն...

ԲԻՐԱԲԵրկար կ'ընես, Կոմիկ, ահա ըսի որ աղէկ եմ:

ԱՆՏՈՆ(առ Բիրաբ) Ի՞նչ կը խօսիք մէկգմէկու հետ:

ԲԻՐԱԲ(առ Կոմիկ) Ի՞նչ ըսեմ:

ԿՈՄԻԿՏեր, լուսահոգի հօրս համար կը խօսինք:

ԱՆՏՈՆԱղէկ աստեն գտեր էք: Քիչ մը առաջ Մարգրիտի հետ էի եւ քու վրայօր շատ գանգատներ կ'ընէ. կրնա՞ս ըսել ինձի պատճառը:

ԿՈՄԻԿ(մեկուսի) Միշտ պատճառ կը հարցնէ: Պատճառը այն է, որ չեմ ձգեր զինքը անձանօթ երիտասարդներու հետ խօսակցի:

ԱՆՏՈՆՈրո՞ւ հետ կը խօսակցի:

ԲԻՐԱԲ (առ Կոմիկ)Ես երթամ:

ԿՈՄԻԿ(առ Բիրաբ) Կայնէ՛:

ԱՆՏՈՆԲայց ի՞նչ երկար խօսք է, որ լմնալիք չունի, կը բարկացնէք զիս, առաջ իմ հարցումներուս պատասխան տուր եւ վերջը խօսէ մօրդ հետ:

ԲԻՐԱԲ(առ Կոմիկ) Երթամ, երթամ:

ԿՈՄԻԿԼո՞ւ:

ԱՆՏՈՆՉըսե՛ս, որո՞ւ հետ կը խօսի:

ԿՈՄԻԿԵրուանդին հետ, շատ կը սիրէ Երուանդը. միշտ անոր վրայ կը խորհի, անոր վրայ կը խօսի. գրեթէ անոր համար կ'ապրի, եկո՞ւ տե՛ս որ Երուանդը չսիրեր զինքը:

ԱՆՏՈՆԵրուանդը շսիրե՞ր Մարգրիտը:

ԿՈՄԻԿՈՂ, մանաւանդ թէ կ'ատէ:

ԱՆՏՈՆՈւրեանն ճար մը մտածելու եմք Մարգրիտը ազատելու համար:

ԿՈՄԻԿԳիշեր ցորեկ մտածմունքս այն է. բայց բան մը չկրցի գտնալ: Դուք որ իր հայրն էք, Մարգրիտը մեկուսի առնելու էք, եւ իրեն խրատ տալու էք, որ այսպիսի տղայական գուարճութիւններէն ետ քաշուի. իսկ եթէ մէկը սիրել կ'ուզէ, ահա ես պատրաստ եմ. քանի որ Երուանդը շսիրեր զինքը, ձեր աղջիկը թշուառութեան վիհը կ'իյնայ եւ կը տկարանայ օր քան զօր. վասնզի, ինչպէս որ կ'ըսէին նախնիք, սէրը երկու կողմէն ըլլալու է: Ահա իմ խորհածս եւ գտածս:

ԱՆՏՈՆԲայց Մարգրիտը կ'ուզէ՞ քեզ սիրել:

ԿՈՄԻԿԻնչո՞ւ համար չպիտի ուզէ: Ես մարդ չեմ:

ԱՆՏՈՆԴո՞ւ ալ մարդ ես. բայց...

ԿՈՄԻԿՏէր, ես ձեր աղջկանը բարութիւն մը ընելու համար յանձն կ'առնում այսպիսի ծանր պաշտօն մը. եթէ չէք ընդունիր... դուք գիտէք...:

ԱՆՏՈՆԻնչպէս կրնայ ըլլալ, որ Երուանդը իմ աղջիկս շսիրէ. անցեալ օր զինքը տեսի եւ այնչափ քաղաքավարութեամբ վարուեցաւ հետս, ինչպէս որ ծառայ մը կ'ընէ իր տիրոջը:

ԿՈՄԻԿՁեզի հետ քաղաքավարութեամբ վարուիլը երբեք չարգելուր, որ ձեր աղջիկը աստէ:

ԱՆՏՈՆՈւրեանն բան մը խորհիմք որ...

ԲԻՐԱԲԵս ալ կը խորհիմ քիչ մը:

ԿՈՄԻԿԲարեկամներուս ալ կ'ըսեն, թո՛ղ անոնք ալ քիչ մը մտածեն:

ԱՆՏՈՆԱյո՛. (Առ Կոմիկ) դուն գնա Երուանդը ինձի կանչէ՛:

ԿՈՄԻԿՇատ աղէկ, տէր (Կերթայ):

ԱՆՏՈՆԴու ալ գնա Մարգրիտը կանչելու:

ԲԻՐԱԲԼաւ. ծառայ եմ:

ՏԵՍԻԼ Դ

ԱՆՏՈՆՏարօրինակ բաներ, Մարգրիտը իր հոգին կու տայ Երուանդի համար, եւ Երուանդը իր ատելութիւնները Մարգրիտի համար. անհաւատալի դէպք: Բանի մէջ բան կայ: Ինչ որ ըլլայ հարկաւ ետքէն պիտի հասու ըլլամ: Հիմա երկուքն ալ կը գան եւ կը խօսին իրենց հետ. ահա Երուանդը կը գայ:

ՏԵՍԻԼ Ե

Երուանդ եւ նոյն

ԵՐՈՒԱՆԴԾառայ եմ, տե՛ր:

ԱՆՏՈՆՇատ կը բաղձայի ձեզի հետ առանձին տեսութիւն մը ընելու:

ԵՐՈՒԱՆԴՇնորհակալ եմ:

ԱՆՏՈՆՆախ ձեզի բան մը պիտի առաջարկեմ, որուն ոչ չպիտի ըսէք:

ԵՐՈՒԱՆԴ(մեկուսի) Արդեօք Մարգրիտը ձեռքէս առնե՞ պիտի: Տէր, խօսեցե՛ք:

ԱՆՏՈՆԸնտանիքի մը երջանկութիւնը պիտի խոսովէք, եթէ առաջարկելիքս չընդունիք: Իմ աղջիկս Մարգրիտը...

ԵՐՈՒԱՆԴ(մեկուսի) Ես գիտէի որ նորա համար պիտի խօսի, ի՞նչ պիտի ըսէ արդեօք:

ԱՆՏՈՆԳիտէք որ ձեր վրայ սաստիկ սէր ձգած ըլլալուն ըրածը չգիտեր, եւ դուք, պարոն, կը մերժէք իւր սէրը:

ԵՐՈՒԱՆԴԵ՞ս, ո՛չ երբեք, ի բոլոր սրտէ կը սիրեմ գինքը:

ԱՆՏՈՆԲայց Կոմիկը ինձի ըսաւ, որ դուք չէք սիրեր գինքը:

ԵՐՈՒԱՆԴԽաբեր է ձեզ. այն ձեր ծառան Մարգրիտը ինձի հետ տեսնալուն պէս առիծ կը կտրի եւ չթողուր որ խօսակցինք. կը սիրեմ Մարգրիտը եւ սիրելէն չպիտի դադրիմ:

ԱՆՏՈՆԿոմիկը ասանկ բաներ ընէ՛, բնաւ չէի յուսար:

ՏԵՍԻՆ Զ

Մարգրիտ և նոյնք

ՄԱՐԳՐԻՏ(հորը ձեռքը պագնելով) Հա՛յր:

ԵՐՈՒԱՆԴ(Մարգրիտի ձեռքը պագնելով) Օրիորդ:

ԱՆՏՈՆԻ՛նչ կ'ըսես, Մարգրիտ, կը սիրե՞ս Երուանդը:

ՄԱՐԳՐԻՏՈ՛հ, (Երուանդի վիզը պլլուելով) կը սիրեմ Երուանդը:

ԵՐՈՒԱՆԴՏԷ՛ր, (Ի ծունկ իջանէ) վերջ տուր մեր թշուառութեանց:

ՄԱՐԳՐԻՏՀայր, (Ի ծունկ իջանէ) կարելի եղածին չափ շուտ:

ԱՆՏՈՆԵլե՛ք, անմե՛ղ Էակներ. (Առ Երուանդ) քեզի կը տամ Մարգրիտը, քուկդ է:

ՄԱՐԳՐԻՏԻ՛նչ երջանկութիւն:

ԵՐՈՒԱՆԴԱնյուսալի էր այսքան շուտ: Այն գազան Կոմիկը, որ կ'ուզէր մեզ գատել, մեր ժամ առաջ միանալուն պատճառ եղաւ:

ԱՆՏՈՆԱյո, երթամ զինքը գտնամ եւ աղէկ մը ծեծելէն զկնի վռնտեմ զինքը, չար ծառայ. (Ձեռքերէն կը բռնէ) երթանք, գաւկըներս մէկտեղ. ձեզի ալ կը հրամայեմ, որ Կոմիկը տեսնալնուդ պէս չարաչար պատժէք զինքը:

ՄԱՐԳՐԻՏԻ՛նչ ուրախութիւն:

ԵՐՈՒԱՆԴՈ՛ւ տէր...: (Կերթան):

ՏԵՍԻԼ Է

ԿՈՄԻԿ(ծամելով, եւ ձեռքը փետրէ աւելով մը կ'աւլէ) Աղէկ ճամբայ բանեցուցի Երուանդը Մարգրիտէն գատելու համար. մէկ տէրս մէկ կերպով համոզեցի, միւսը ուրիշ կերպով. կը յուսամ, որ պիտի յաջողիմ: Ինչ երանութիւն ինձի համար, որ 30 տարիէ ի վեր ծառայութեան փափուկ պաշտօնը կը վարեմ, եւ հիմա Մարգրիտն ինձի կնութեան առնում: Երուանդի համար բաւական գրպարտութիւններ դիզեցի Անտոն տիրոջս. Թէոփիլէ տիրոջս ալ Մարգրիտը բամբասեցի. հիմա երկու կողմն երէկ լրացուց իր վաթսուներորդ տարին: Բայց հիմա ի՛նչ հարսանիքիս վրայ խորհիմ եւ ապա մօրս վրայ: Բազմոցները աղէկ մը սրբեմ, որ տիրոջս աչքը մտնամ. մէկը կը գայ:

ՏԵՍԻԼ Ը

Թէոփիլէ եւ նոյն

ԹԷՈՓԻԼԷԼանցուցի նամակը. ամենն ալ մանրամասնաբար գրեցի եւ կը յուսամ, որ պարոն Անտոնը իր տունը չընդունիր ասկից ետքը Երուանդը:

ԿՈՄԻԿՇատ աղէկ, տէր. նամակը հիմա կը տանիմ:

ԹԵՈՓԻԼԵՄԻ ուշանար, որ ժամ առաջ զատեն առնեն Երուանդը. բնաւ զինքը
չտեսայ այսօր. Մարգրիտի հետ ըլլալու Է դարձեալ:

ԿՈՄԻԿԱՅՈՒ, տէ՛ր, միշտ մէկտեղ են:

ԹԵՈՓԻԼԵԱՅՆ անառակ աղջիկը խեղճ տղուն կորստեանը պատճառ պիտի
ըլլայ:

ԿՈՄԻԿՆՈՂ մի՛ ընէք, տէր, այս նամակաւ կրնաք յաջողիլ:

ԹԵՈՓԻԼԵ(նամակը սեղանի վրայ կը ձգէ) Նամակը հոս կը ձգեն, առանց
ուշանալու տար (Կերթայ):

ԿՈՄԻԿՇԱՍՏ աղէկ, տէր:

ՏԵՍԻԼ Թ

Բիրաբ եւ նոյն

ԲԻՐԱԲԴարձեա՞լ գործի վրայ ես:

ԿՈՄԻԿԵՐՔ դատարկ տեսար զիս:

ԲԻՐԱԲԻ՞նչ լուր ունիս:

ԿՈՄԻԿԲերկրալի լուրեր ունիմ քեզի հաղորդելու. Մարգրիտն ինձի կնութեան պիտի առնում. Երուանդն ալ հայր:

ԲԻՐԱԲ(գարնանքով) Երուանդը հա՛յր:

ԿՈՄԻԿԱյո՛, այո՛, հայր պիտի ըլլայ ինձի. չե՞ս ուզեր:

ԲԻՐԱԲԲայց ի՞նչպէս:

ԿՈՄԻԿՕ՛Ֆ երկար կ'ընես... քու էրիկդ պիտի ըլլայ:

ԲԻՐԱԲԿը հաւանի՞ արդեօք. եթէ ընդունի զիս կնութեան, գէշ չըլլար: Բայց ի՞նչպէս յուսամ, վասնզի ես ծեր եմ:

ԿՈՄԻԿԻ՞նչ վնաս ունի. Երուանդը արդէն հնութիւնը շատ կը սիրէահա կ'երթայ կը լմնայ:

ԲԻՐԱԲԿնիկներուն հիներն ալ տակաւին պատիւ ունին եղեր:

ԿՈՄԻԿԱնշուշտ:

ԲԻՐԱԲԳէշ չպիտի ըլլայ, խելքս հասաւ:

ԿՈՄԻԿԱռաջ ես Մարգրիտը առնեմ, ետքն ալ դու Երուանդին հետ կը կարգուիս: Հարսանեաց համար գնա անուշեղէններ ծախու առ, որպէսզի դու ալ քու կողմէդ Մարգրիտի ընծայ մը ըրած ըլլաս:

ԲԻՐԱԲՇատ աղէկ, ես երթամ առնելու. բայց իմ գործս ալ լմնցոր:

ԿՈՄԻԿՉոգ մի ըներ:

ԲԻՐԱԲԻ՞նչ գիտնամ, նայինք, մեծ է գորութիւն Աստուծոյ (Կ'երթայ):

ՏԵՄԻԼ Ժ

Անտոն, Երուանդ, Մարգրիդ թեի թեի տուած եւ նոյն

ԿՈՄԻԿԻ՛նչ կը տեսնեմ, Մարգրիտը Երուանդին թելը մտած: Ա՛հ, աս ո՛րքան թշուառ եմ ես:

ԱՆՏՈՆ(առ Կոմիկ) Անիծեալ, քեզ մինչեւ հիմա հաւատարիմ ծառայ մը կը ճանչէի. բայց հիմա ամէն գործերուդ հաստի ըլլալով, ինացայ որ վատթարին մէկն ես:

ՄԱՐԳՐԻՏՔանի որ կը յիշեմ ինձի ըրածները, այնպէս կու գայ ինձի, որ առնեմ զինքը գազաններու առջելը նետեմ:

ԵՐՈՒԱՆԴԲայց ինձի ըրածները, ա՛հ, թշուառական, երկու կտոր ալ ընեմ քեզ, դարձեալ չեմ կշտանար:

ԿՈՄԻԿ(միշտ լուռ, աւելը ձեռքէն կ'իյնայ)

ԱՆՏՈՆԱնխիղճ մարդ, ասանկ գաղտնի դարան կը լարես երկու անմեղ էակները կորսնցնելու համար:

ՄԱՐԳՐԻՏԱյո, հայր:

ԵՐՈՒԱՆԴԵթէ մի ըստ միոջէ պատմելու ըլլամ լմնցնել:

ԿՈՄԻԿ (մեկուսի) Որչափ ալ բարեկամ ունիմ:

ԱՆՏՈՆԻճՆՅՈՒ լուռ կը կենաս:

ԿՈՄԻԿԻ՞նչ ընեմ, տէր:

ԱՆՏՈՆՊատասխան տուր ըսածներուն:

ԿՈՄԻԿԲոլորն ալ գրպարտութիւն է:

ԱՆՏՈՆ(նամակը կը տեսնէ կ'առնէ) Այս ի՞նչ է, նայիմ, ինձի համար է, այո՛ (Կը բանայ). Մեծապատի տէր, եղբօրորդիս Երուանդը ձեր աղջիկին վրայ սէր ձգած ըլլալուն ողորմելի վիճակի մէջ կը գտնուի, ուստի կ'աղաչեմ, որ զինքը չընդունիք ձեր տունը. ստորագրութիւն՝ Թեոփիլէ:

ԵՐՈՒԱՆԴՈ՛Վ Աստուած:

ՄԱՐԳՐԻՏԻ՞նչ կը նշանակէ աս:

ԵՐՈՒԱՆԴԿոմիկին հարցուցէք:

ԱՆՏՈՆԻ՞նչ կը նշանակէ այս նամակը:

ԿՈՄԻԿՏէ՛ր, նամակը դուք կարդացիք եւ նշանակութիւնը ինձի՞ կը հարցնէք. ի՞նչ գիտնամ ես:

ԱՆՏՈՆԱս ալ քու սատանայութիւնդ է. (Ականջէն կը բռնէ), անբան անասուն:

ՆԵՐՍԷՆԿոմի՛կ, Կոմի՛կ:

ԿՈՄԻԿԲանս բուսաւ, հիմա միւս տէրս ալ պիտի գայ. աս որքան թշուառ եմ ես:

ԱՆՏՈՆԻ՞նչ էր պատճառը, որ այս երկուքը բաժնել կ'ուզէիր մեկզմեկէ:

ՆԵՐՍԷՆԿոմի՛կ, Կոմի՛կ:

ԿՈՄԻԿԱս ալ բնաւ մտքէս անցած չէր:

ԱՆՏՈՆՈ՞վ է քեզ կանչողը:

ԿՈՄԻԿՍա... սա... տանան (Ձեռնըներովը երեսը կը ծածկէ):

ԵՐՈՒԱՆԴՇատ կ'ուզէի որ այս վիճակի մէջ տեսնամ գրեզ:

ՏԵՍԻԼ ԺԱ

Թւոփիլէ եւ նոյնք

ԹԷՈՓԻԼԷ(Երուանդը Մարգրիտի հետ կը տեսնայ կ'ապշի) Մեր ծառան տեսա՞ք:

ԱՆՏՈՆՈ՞վ է ձեր ծառան:

ԹԷՈՓԻԼԷԿոմիկը. Կոմի՛կ:

ԱՆՏՈՆԴու ալ խեղդ ես, ի՛նչ ես. Կոմիկը ի՛նչ ծառաս է:

ԹԷՈՓԻԼԷԿատակ ընելու ատեն չունիմ, ըսէք ինձի եթէ տեսաք զինքը:

ԱՆՏՈՆԻ՞նչպէս կրնայ ըլլալ որ...

ԹԵՈՓԻԼԵՍիբոս կը նեղէք, կարեւոր գո բծեր ունիմ, պիտի երթամ, ըսէ՛ք:

ԱՆՏՈՆ(առ Կոմիկ) Երեսդ բաց, ձեռքերդ վար ա՛ն:

ԹԵՈՓԻԼԵԱյո՛, ահա իմ ծառաս, ի՞նչ իրաւունքով ականջէն բռներ էք:

ԱՆՏՈՆԻ՞մ ծառաս է:

ԹԵՈՓԻԼԵՉԷ՛, իմս է:

ԱՆՏՈՆ(առ Կոմիկ) Որո՞ւ ծառան ես:

ԿՈՄԻԿՁեր ծառան եմ:

ԹԵՈՓԻԼԵԲայց ես...

ԿՈՄԻԿԱյո՛, ձեր ծառան եմ:

ԱՆՏՈՆՀիմա կը հասկնամ. ինձի ալ կը ծառայես, պարոն ԹԵՈՓԻԼԷի ալ. չեմ ուզեր, որ ասկից ետքը իմ տունս գաս, կորիւր գնա՛ (Կը հրէ). բայց եկուր հանէ՛ հազուստները եւ անանկ գնա:

ԿՈՄԻԿՏԷ՛ր:

ԱՆՏՈՆՇուտ եղիր, հանէ՛:

ԿՈՄԻԿ(կը հանէ վրայի հազուստը) Բայց առանց հազուստի...:

ԹԵՈՓԻԼԵԵս ալ չեմ ուզեր, որ աչքիս երեւաս, կորի՛ր (Կը հրէ):

ԵՐՈՒԱՆԴՅօրեղբայր իմ. ինձի համար ալ բաւական գրպարտութիւններ ըրած

Է ձեզի. բոլորն ալ սուտ են, եւ ես օրհորդ Մարգրիտը կը սիրեմ, ինչպէս որ ան ալ զիս:

ԹԵՈՓԻԼԷՇատ աղէկ: (Առ Կոմիկ) Վայրենի գազան, (Կերթայ):

ԱՆՏՈՆ (առ Կոմիկ) Անբան անասուն (Կերթայ):

ԵՐՈՒԱՆԴ(առ Կոմիկ) Է՛ջ, ասանա՛կ (Կերթայ):

ՄԱՐԳՐԻՏ(խղճալով) Կը խղճամ քու վրադ. բայց ինչո՞ւ: Ձիս թշուառացնէիր պիտի, եթէ հայրս չիմանար քու սատանայութիւններդ: Անիծեալ, տխմար, ապուշ (Կերթայ):

ՏԵՍԻԼ ԺԲ

ԿՈՄԻԿ(առանձին) Քիչ մը առաջ մէկը իմ ծառաս է, կ'ըսէր ինձի համար, միսն ալ իմ ծառաս է կ'ըսէր, հիմա երկուքն ալ զիս թողուցին. ո՛հ թշուառութեանս: (Բիրաբըր կամաց կամաց գալով դռան առջեւ կը կենայ ձեռքը սակառ մը) Ի՞նչ ընեն, ո՞ր երթամ:

ՏԵՍԻԼ ԺԳ

Բիրաբ եւ նոյն

ԲԻՐԱԲԱս շաքարեղէններն ալ որչափ ծանր են:

ԿՈՄԻԿԵթէ մայրս գայ ու զիս ասանկ մերկ տեսնայ, ի՞նչ պիտի ըսէ արդեօք:

ԲԻՐԱԲ(հորովի) Անկարելի բան. վասնզի Երուանդը հիմա տեսայ, երեսս անգամ չնայեցաւ. ի՞նչպէս կրնայ ըլլալ, որ իրեն հետ ամուսնանամ:

ԿՈՄԻԿԵտեղճ մայրս կը յուսար, որ Երուանդը պիտի առնէր իրեն ամուսին: Ո՛հ թշուառութեանս. Երուանդին Մարգրիտը առնելը ինձի ալ վնաս տուաւ մօրս ալ. ինչ աղէկ կ'ըլլար, թէ որ Մարգրիտը ես առնէի եւ մայրս ալ Երուանդը առնէր, ասանկով երիտասարդ հայր մը պիտի ունենայի. բաղդը կը ծիծաղի զիս:

ԲԻՐԱԲ(Կոմիկը կը տեսնէ) Ջաւակս, դարձեալ գործի վրայ չէ. վասնզի զգեստները հաներ է. Կոմիկ, ի՞նչ լուր ունիս, հարսնիքները ե՞րբ պիտի կատարուին, ես շաքարեղէնները առի:

ԿՈՄԻԿ(չպատասխաններ)

ԲԻՐԱԲԻնչո՞ւ լուր կը կենաս, գործերդ աւելցուցի՞ր, ի՞նչ ըրիր, որ ասանկ կը խորհիս:

ԿՈՄԻԿԲան մը չկայ:

ԲԻՐԱԲՉարսանեաց հանդէսը ե՞րբ պիտի կատարուի:

ԿՈՄԻԿԿատարուեր լմնցեր են. Երուա՛նդը առաւ Մարգրիտը:

ԲԻՐԱԲԲայց Երուանդը իս կ'ուզէր առնել ըսիր, խաբեցի՞ր զիս:

ԿՈՄԻԿՔեզ խաբելու համար չըսի, բայց անանկ եղաւ. ասկից ի գատ երկու

տերերս ալ իս վոնտեցին:

ԲԻՐԱԲԵՒ Ի՞նչպէս:

ԿՈՄԻԿԻ՞նչպէս պիտի ըլլայ, հագի թէ մէկ տիրոջս հրամանները կատարելու ետեւէ էի, միւս տերս ալ սկսաւ կանչել զիս. մէկուն այո՛, միւսին ո՛չ ըսելով, իմացուեցաւ, որ երկու տերանց ծառայողներէն մէկն ալ ես եմ. մէկը գայի կերպարանք մտնալով կարծես կ'ուզէր զիս ուտել. միւսն ալ առիծի նման բզիկ բզիկ ընելու կը ջանար զիս. ականջս կը քաշէր, ասպտակ կ'իջեցնէր իմ նագելի այտերուս, ասդիս անդին կը հրէր. նոյն միջոցին քեզ կը յիշէի. ահա ասանկ խաղք խայտառակ ըլլալէն զկնի՝ զգեստներս ալ առին վրայէս եւ հիմա ասանկ մնացի. այս վիճակը շատ ողորմելի վիճակ մըն է. առաջ ինչ էր նէ դարձեալ ծառայ մըն էի, այլ հիմա...

ԲԻՐԱԲԱՆՎԵՏՈՒՐ արաղաղ դարձեր մնացեր ես:

ԿՈՄԻԿԻ՞նչ ընենք:

ԲԻՐԱԲԻ՞նչ պիտի ընենք, հիմա ազատ ես, վասնզի տէր բան չունիս, ազատ ես, ինչ որ ուզես կրնաս ընել. մի՛ մտածեր, ի՞նչ ընենք, եկուր շաքարեղէնները ուտենք գոնէ:

ԿՈՄԻԿԻ՞րիկուան ուտելու հաց ունի՞նք:

ԲԻՐԱԲԶԱՅ չկայ. ես արդէն հաց չէի ուտեր, որ հարսնիքի գիշերը շատ ուտենք:

ԿՈՄԻԿԾաքարեղէնները գնա ծախէ՛ եւ հաց ծախու առ:

ԲԻՐԱԲՉԵՄ կրնար ծախել:

ԿՈՄԻԿԲայց ի՞նչ ընելու ենք այս իրիկուն:

ԲԻՐԱԲԱՆՕՅԻ մնալու ենք. ահա այս է երկու տերանց ծառայութիւն ընողներուն

վերջը. իմ թշուառութեանս ալ պատճառ եղար (Կերթայ):

ԿՈՄԻԿ(կը կենայ գլուխը ծռած ու կամաց կամաց լալով կ'երթայ ըսելով) Այս
ի՞նչ դժբախտութիւն է գլուխս եկաւ:

ՎԵՐՉ